

Փ Ո Ւ Ն Ձ

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Պատրիարք Հօր կողմանէ հետեւեալ հրահրէն ուղղուած է առ երեսօխոսանս :

ՀՐԱԿԻՐ ԱՌ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒՍԱՆՍ

Մեծապատիւ Երեսօխոսան էֆէնախիք : Ազգային վարչութեան ֆաղ. ժողովոյ հրատարման խնդրոյն վրայ վերջին անօրէնութիւն ընելու համար վերստին Ազգ. ժողով գումարել հարկ տեսնելով ինչհետեւ ժողովոյ գիւտանք, կհրահրեմզհամայն երեսօխոսանս առաջիկայ ուրբաթօր (օգոստոս 31) գալ իրենց նուիրական պարտքը կատարել :

Ատեանը պիտի բայուի ի ժամ վեց, և ժողովոյ գումարումը պիտի լինի ըստ նախորդին ի Մայր եկեղեցւոյ Գումագափուի Մնամ աղօթարար

27 Օգոստոս 1873 Պատր. Կ. Պօլսոյ
ի Պատր. Հայոց Պ. Կ. Երեմի

Վաթանի չափ երեսօխոսանաց կողմանէ ալ հետեւեալ գիրքը ղրկուած է առ վսեմափայլ ատենապետ երեսօխոսանական ինչհամար ժողովոյ :

Գումարումը ամօսագրոս

Ազգային երեսօ. ժողովոյ

Ազգային վարչութեան ներկայ տաղանապայլոյ փնտախին մէջ, ինչպէս տեսնուեցաւ ազգային երեսօ. ժողովոյ վերջին նիստի ներկայացեալ ֆնտիչ յանձնաժողովոյ տեղեկագրէն, հարկ կտեսնեմք և կառաջարկեմք որ,

Նախ՝ երեսօ. ժողովոյ յառաջիկայ նիստը դռնփակ ըլլայ, երեսօխոսանաց ազատ փնտախութեան և իրենց պարտաւորութիւնը խղճի մտօք կարենալ կատարելու համար :

Երկրորդ՝ Ղալաթիոյ եկեղեցին ըլլայ, ինչպէս մինչեւ ցարդ կըլլար, ուր գիւրութիւն կայ երեսօխոսանաց երթեւեկութեան :

25 օգոստ. 1873

Մնամք յարգանքօք

Մարտիրոս Բեկի

Ընդհանուր ժողովոյ վերջին նստին մէջ տեղի ունեցած անհամայն ցոյցերն հարկադրեցին երեսօխոսանները, միայն մէկ երկու նիստ դռնփակ ընել : Ամեն ա՛յն պարկեշտ և ողջամիտ ազգայինք՝ որ ներկայ էին վերջին նստին և տեսան կամ լսեցին թուրումարածիներու անցուդարձն ու յարձակման պատրաստութիւնները, իրաւունք կուտան իրենց երեսօխոսանաց այս պահանջման այսինքն դռնփակ նիստ ուղեւուն : Անտարակոյս եմք, թէ այսպիսի ողջամիտ ազգայինք երբէք չեն հաւատարմարդամքենայից կողմանէ եղած քսութեանց ու բանասրկութեանց, որովք կղանան այնպէս տարածային թէ

տան ծերեփոխան (մինչդեռ 60 ի չափ են) ժողովրդեան ունկնդրութիւնն ու ներկայութիւնը չեն ուղեր, որպէս զի մթութեան մէջ խօսին ու դրձեն՝ առոտն կոխելով ազգին իրաւունքն ու շահը : Ահա՛ այսպիսի խմատով անտարադիր յայտարարութիւն մը տեսնուեցաւ երէկ, զոր Մասիսի ցրուիչը ցանր է անդին ասդին, և որ՝ կերեւի թէ՛ Մասիսի Կառնանէն եղած է : Ողջամիտ և պարկեշտ ու օրինասէր ազգայինք թող տեսնեն թէ քսութիւնք ու բանասրկութիւնք ո՛ւնկից կը ղլեն :

Ս. Պատրիարք Հօր հրատարման պատճառաւ պաշտօնավարութենէ դադարեալ ժողովներն՝ այս շաբթու շարունակել սկսան :

Աղթամարայ կաթողիկոսական խնդրոյն համար՝ եկեղեցական Համագումար ժողովոյ կողմանէ կազմեալ յանձնաժողովն երկուշաբթի օրը նիստ ըրաւ :

Վաղն ալ կրօնական ժողովն նիստ պիտի ընէ, ի կարգադրութիւն՝ իրեն վերաբերեալ խնդրոց :

Պանտրմնայու ազգայնոց կողմանէ տեղւոյն կառավարական ժողովոյն անդամակցող արժապատիւ քահանայն հրատարած ըլլալով՝ նորա տեղ ընտրուելէ Յաննեան արժանապատիւ Տ. Ոսկի քահանայն ի խնդրոյ թաղական մեծարդոյ խորհրդոյ և պատուարժան ազգայնոց տեղւոյն, և հաւանութեամբ առաջնորդական տեղապահ արժանապատիւ Տ. Աղամ էֆէնտի աւագ քահանային :

Պալքքէտէրի Միւթէսարըֆին հրամանագրոյն վրայ, Տ. Ոսկի քահանայն ի ժողով հրահրուել, շնորհաւորուել, և սկսել է պաշտօնավարել :

Մենք ևս կշնորհաւորեմք յամենայն սրտէ, անտարակոյս ըլլալով թէ ինչպէս քահանայական նոյնպէս և կառավարական այս պաշտօնը՝ յորս ժողովրդեան ընդհանուր համակրութիւնը բարձրացոյց ղինքը, յօգուտ ժողովրդեան պիտի վարէ :

Երզնկայէն կօթը ժամ հեռի թորթան նուիրական գիրքի՝ ուր Ս. Լուսաւորչի և նորա թոռանց սրբազան սակերտին հանդուցեալ են, - Տ. Եղեկիէլ քահանայն Պատրիարքարանէն վաւերացեալ և ժապաւինեալ տետրակ ի ձեռին հանդանակութեան եղած է, զիւղին մէջ շինել սկսուած բոց առ ի չգայէ դրամի անկատար մնացած դպրոցին շինութեան և արգէն եղած պարտուց վճարման համար :

Շատերը այս և ուրիշ անուններով հանդանակութեան կեննն, բոց առանց

վաւերական գիր ու տետր ի ձեռին ունենալու : Սակայն այս վերջինը՝ այսինքն Տ. Եղեկիէլի ձեռնարկած հանդանակութիւնը այս կարգէն չէ, և հետեւաբար չեմք վարաներ հրահր կարգալ համայն ուսումնասէր ազգայնոց, որ բարեհաճին մասնակցել երբ իրենց ներկայանայ վաւերական գիրն ի ձեռին :

ՆՇԱՆՔ ԺԱՄԱՆԱԿԻ

Ճ Ե Մ Ա Ր Ա Ն

Ասկէ եւսուսուիրեք տարի առաջ, ձեւմարան անուամբ յիշուած դպրոցին պատճառաւ ազգայնոց մէջ յուղուած կուռոյն ժամանակը, ես քանուերկու տարու երիտասարդ մէն էի : Կըրնար ըլլալ, որ վաթսուսուիրեք տարեկան ալ եղած ըլլայի, և երիտասարդ կամ ձեր, ժողովրդեան կամ սեղանաւորաց կողմն եղած ըլլայի : Իր անօրէնութեան դասն ի մօտոյ իմ ձեռամբս կրօնցունելուն համար նարստոս անտարաբեալ Պ. Իւթիւճեան կըցանկայ, որ ես սեղանաւորաց կողմն եղած ըլլամ. իրեն հաճութիւն մատուցանելու համար՝ թո՛ղ սեղանաւորաց կողմն եղած ըլլամ. Պ. Իւթիւճեան այս անցից յիշատակութիւնը նորոգելով՝ արդի սերունդէն ինչ փոխարինութիւն կակընկալէ ինձի համար :

Արդի սերունդը ոչ միայն եւսուսուիրեք տարի առաջ անցածներուն անփոյթէ՛ ժամանակակից չըլլալով, այլ և, իր օրովը, տասուիրեք տարի առաջ ղուրցուված խաւարեալ և լուսաւորեալ բառերն անգամ մտքէ չանցունէր : Արդի սերունդըն եւսուսուիրեք տարի առաջ չար կամ բարի գործածս չդիտէ, այլ տասուիրեք տարի առաջ գրածներէս գիտէ, որ ես ծայրայեղ կուսակցութեանց ոչ ըզդպակից եմ և ոչ արբանեակ : Եւսուսուիրեք տարի առաջ ալ նոյնպէս էի, և ոչ ամբոխին և ոչ սեղանաւորաց հետ Գուռը չդնայի. ոչ տանս մէջ ժողով խմբեցի, ոչ այլոց տուները խորհրդակցութեան դնայի : Իմ յաճախածս, խաղաղասէր, ազգասէր, զգօն և համեստ Օտեան Պօզրս ազգային տունն էր, և հոն, այն կուռներուն շարաշուք պատեհան Անուոյ անըջական ուղեւորութեանս առաջին ուրուագիրն երկասիրած ըլլալով՝ իր բարեկամաց ակմբին մէջ ղայն կը վերծանէի ա՛յն ժամանակը, որ ոսոխս արժանի վատ մը, մեծատանց պնակալէղ մը, սեղանաւորաց ի նպատակ և ձեւմարանեանց ի հեճուկս, դձուճ և անխմատ ոտանաւոր մը քսութեւլ չըջաբերութեան հանած էր : Բայց վատասիրտ պնակալէղը հասարակաց կասկածին իր վրայ գիւմըլ տես

նալով՝ իր ապահովութեանը համար իմ անունն համբաւած էր իբրեւ այն անբաւ նահան ոտանաւորին հեղինակ . և յետոյ իմ անուամբս չորս տող ստորագրութիւն մըն ալ յաւելցուց տակը , որով իմ վրաս ձգուած ձախողակի կասկածն իսպառ ցրուեցաւ : վասն զի , ոտանաւորն ութ ոտ նեան ըլլալով՝ անբան գրին ստորագրութեան տողերէն մէկը կոյրդկուբայն ին նոտանեան ըրած էր :

Ես ճեմարանէն Պ . Պարտիզպանեանին հետ ելայ՝ ներքին կանոնադրութիւնը չգործադրուելուն համար , և Գրակրօտեանց , Սիղդաեանց , Մարիսեանց , կըրկին եւ ապետութեանց , և Ագիտեանց ու կղէտմէնեանց պատմութիւններն արդէն կարդացած ըլլալով՝ անգտին այն ժամանակէն ծայրայեղ կուսակցութեանց վախճանը գիտէի և կղզուշանայի :

Այսու ամենայնիւ , Պ . իւթիւճեան կուղէ , որ ճեմարանն ես կործանած ըլլամ . Պ . իւթիւճեան այլապէս լարդապետին Հնարաւանի գպրոցէն արձակելն ալ ինծի վերագրեց՝ կազանդի օրը , Գրիսուպօրոյ նաւամատուցի սրճարանին մէջ , ծանօթ աղգայնոց առջեւ վկայելով , որ վարդապետին երթալուն իմ խօսքս եղած է պատճառ : Բայց ճեմարան գոցելը , Պ . իւթիւճեանին բերած վարդապետը գպրոցէն արձակել տալու պէս գիւրին և կարելի բան չէր , և վասն այնորիկ՝ ճեմարանն ես ոչ կըրնայի բանալ կամ գոցել :

Ճեմարանն իր այն ժամանակի տրամադրութեամբ՝ վաղ կամ անագան գոցուելու համար բացուած էր , վասն զի , իր կեանքը կենսապահ չունէր : Ճեսարանին սպասելու և երեսուցիկ տխրանքներ տրուած էր , բայց շինողը ոչ աղգն էր և ոչ երուսաղէմ , այլ մասնաւոր բարերար մը : Բարերարը շինուածը կառուցած էր , բայց եկամուտ չէր հայթայթած , և իր յոյսն աղգին ու երուսաղէմի վրայ դրած էր : Աղգն ինչպէս հիմայ , առաւել եւս այն ժամանակը , դիշերցորեկով եօթանասուն և հինգ տղայ ձրի սնուցանելու , ձրի դատարարակելու կարողութիւն չունենալով՝ չէր կրնար գպրոցը կանգուն պահել :

Ճեմարանն այն ժամանակն երուսաղէմի ճեմարանութիւնը խնդրեց , և այնչափ կուսակցութեան ետեւ չի կրնալով աղգին ո՛ր և իցէ կողմէն օգնութիւն դանալ , կամայ ակամայ գոցուեցաւ : Եթէ ճեմարանը հաստատուն եկամուտ ունենար , ոչ ինքնին կը գոցուէր , և ոչ աղգն ամբողջ կըրնար զայն գոցել : Ահաւասիկ խօսակցի ազատ Ռուսմարանը : Քանի որ իր հիմնադրաց քիչ ու շատ եկամուտը կայ , քանի որ կարող անձանց որդիքը կը հանդանակեն , գոցուելու երկիւղ չունի : Բայց եթէ այսօր Նուպար փաշայ գպրոցին համար աղգէն օգնութիւն խնդրէ , վաղը գպրոցին հաստատութիւնը կը դրդուի աղգին անկարողութեամբ : Ճեմարանը ոչ հաստատ եկամուտ ունէր , ոչ ալ աշակերտաց հանդանակը , և վասն այսորիկ չի կրցաւ շարունակել :

Գոցեցիք , կրտէ Պ . իւթիւճեան : Թող բանայիք կրտէ առողջ բանը . ճեմարանին բանալիները մա՛րդ չգրաւեց , մա՛րդ

ճեմարանը նորով չտուաւ , մա՛րդ ճեմարանին մուտքը զնուորներով չարդիւրեց : Եւ եթէ այնպէս ճեմարի , որ սեղանաւորաց գրոհն այժմանակը ճեմարանին անցաղթելի իօշրեղանն էր , սեղանաւորները շատոնց պակասած են : Եւ եթէ մէկն եկամուտները շարիւծ ճեմարան գար , սեղանաւորաց ստուերները չէին կրնար վերածնութիւնը խափանել :

Եթէ այն ժամանակի աշակերտներն իրենց դասերը շարունակէին , շատ աղէկ կըլլար . բայց ձախողութիւնը գալէն ետեւ՝ Հայկանուց արգանդներն ամլացան , կամ թէ այժմու մայրերը բիովտացի անբաններ կը ծնանին : Ոչ ապաքէն հիմակուան սերունդն աւելի ազատ , աւելի ուշիմ և աւելի ուսումնասեան է . ինչո՞ւ համար սղգն եթէ կարող է այնպիսի ուսումնարան մը չհաստատել . միթէ դարձեալ սեղանաւորներէն կ'սխալնայ : Ճեմարանէն ետեւ , Մուրատեան վարժարանին հետ ոտիւրու համար՝ Փարիզի մէջ ալ Հայկանուան անուամբ գպրոց մը բացուեցաւ , ու գրեթէ աղգայնոց հարիւրէն իննսուներեակն ստացած էր : Ինչո՞ւ համար այն վարժարանն ալ չշարունակեց . — վասն զի այն ալ եկամուտ չունէր , և խրկուած մանկանց տարեկանաւ պիտի սպրէր . աղաք եւ ուսուցիչներ խրկուեցան , բայց տարեկանները չխրկուելով՝ այն գպրոցն ալ հարիւր քսան հազար Ֆրանք եկամուտ ունեցող գպրոցի մը հետ ոչնչիւ մրցելու անկարող դանուեցաւ և գաղարեցաւ :

Պ . իւթիւճեան ինչո՞ւ չկրցաւ իր մեծ և անբողբոյս իմացութիւնն աղգեցութեամբն այն գպրոցը յոտին պահել : Պ . իւթիւճեան այն ժամանակը ոչ ինծի պէս սուկական մը , այլ տիւղերահուշակ հրապարակադիր մըն էր , և ձեռքը թերթ մը ունէր , որ քսանհինգ տարուան մէջ , Հայոց մեռելներն ու կենդանիները , վանքերն ու անապատները , քահանաներն ու աշխարհականները , մեծատուններն ու միջակայիները , գիտուններն ու իմաստունները , օրանի մանկանցմէ մինչև գերեզմանաց ամուսնքը ժամանեալ զառամներն ու պառաւները , ձեռք ձեռքի , գլուխ գլխու և կունակ կունակի տալով՝ տաղադրութիւնը մինչև հինգ հարիւր օրինակի հասուցած են : Այսպիսի հրաշք , ոչ Հոգանդացոց , ոչ Լախնացոց , ոչ Մարաց և ոչ հրեշտակաց մէջ տեսնուած է : Պ . իւթիւճեան ձեռքն այսպիսի Բարձրահանգոյն լծակ մը ունենալով՝ ոչ միայն գպրոց մը կացուցանելու , այլ և Հայոց բովանդակ գրականութիւնը , գպրոցները , գասագիրքերն ու գասատուները կերպարանախոսելու կարողութիւն ունէր : Եւ եթէ ես ձեռքս այսպիսի համաշխարհական և հինգ հարիւրնոց անքսպառ թերթ մը ունենայի , ասոնցմէ՝ մեծ բան կընէի , Պ . իւթիւճեանին համար Գրեմոթեանի ոսկի պատկն առաջարկելով՝ անդամանդեայն առնել կուտայի իրեն , և կունակը ծեծելով՝ « Գնա , կրտէի , « արդար հոգեւոյդ սիրտիսնայը համար « զաւեշտ գրէ այսուհետեւ , որ իմաստասիրելու համար միջիւնէն դաս առ « նելու տարածամ մահուան չգատապար « տիս , և Հիւսէյի կրտէն երկրորդ ան « գամ աւելի կ'սթի թիկունք չմատուցա

« նես : Գնա մանաւանդ իրկուունէ իրի « կու ջիղերդ . ու արիւլեան կուրծքդ խա « զոզոյ ճերմակ արեամբն առատապէս « ցօղէ , որպէս զի՝ վերջին անգամ մեռ « նելէդ առաջ՝ մեղի Սրիստոյիանէս մը , « Պղաւտոս մը , Տերենտիոս մը կամ Մու « լիէս մը ըլլաս , դու , որ մեր սահմա « նադրական օրինաց նախկին շարագրու « թեանը մէջ՝ հայոց Լիկուրդոս , Սոզոն , « Չալեւկոս ու Գրական եղար : Ալ ի՞նչ « կուղես Արք « Ես » ըսելու :

Բայց Պ . իւթիւճեան իր այսչափ զօրութեամբը գպրոց կացուցանելու հրաշք չգործեց , այլ ճեմարան կործանելն ինծի համար ի՞նչ գիւրին բան ըլլալն իւր օրինակաւն ապացուցանելու նախահոգութեամբ՝ իր մանկան մէկ կօշկին պատճառաւ Պէշիկթաշի գպրոցը տա՛կնուվրայ ընելով՝ շարթ մը գոցեց , և իր տունն ու տեղը քարկոծուելով՝ ի Հնարաւան փոխադրեցաւ : Հոն ալ , նորասկիզբն վարժարանին հայկարանութեան արժանաւոր գասատու չիկայ՝ աղգին մէջ ըսելով՝ ոչ քիչ շարժողութեամբ այլապէս լարդապետ մը բերաւ , բոլոր թաղին խիղճը յուզեց , և երեկ , ինծի ակնածութիւնն աղգելու համար , իր թերթին մէջ և իր ստորագրութեամբը վկայեց , որ Պ . Մանաւան և Պ . Գափամանեան՝ աղգային գպրոցաց մէջ՝ հայտնաբերուած սուսն կարգէ վարժապետներն են :

Եյ աղէկ , այս վարժապետներն իմ բարբառս մը ծնան յանկարծ , կամ այլապէս լարդապետին գարտեհէն ետեւ հայկարանութիւն ուսան : Արդարեւ Պ . Մանաւանին համար « ամիս ու կէս է որ սասցայ » ըլլաւ : Եւ Պ . Գափամանեանն որ իւր և այլ թերթերու մէջ ալ գրած է , ան ալ ամիս ու կէսէ ի վեր ճանչցած էր , և միթէ Պ . Մանաւանը մօտէն գրունալ , կամ Պ . Գափամանեանը հոն տանիլն այլապէս լարդապետ բերելէն դժուարագոյն էր :

Պ . իւթիւճեան այս աղգասիրութեամբ ըն ալ Հնարաւանցոց բոլորն վարին ու համակրութիւնը շահելէն ետեւ՝ անկէ ալ դարձեալ , օգոյն ժանտութեանն ազագաւ Պէշիկթաշի դնաց . և հոն , սլուտարքեան (նպարավաճառի) զուգալը շարունակեալ զիս իր առաքինական վերմութեանը հետ բաղդատելով՝ զիս վերջապէս դատաւ , և իր բարձրութեանը , այսինքն իւթիւճեանի գերծուցած ազատագրիս գձուծ շղոքորթ մը գասաւ , և Յուդայ վարդապետին խաչովը կնքեց : Եր շնորհեմ իրեն այս լեզուագրութիւնները , որովհետեւ օղիյէն բռնկած ուղեղի զառանցանք են :

Պ . իւթիւճեան ինծի ասոնցմէ մեծ թշնամանք ըրած է : Ես , ճեմարանութեան ու արդարութեան անբողբոյս իմաց զօրութեանէն ձգեալ՝ լրջմտութեամբ խոստովանեցաւ նախ , որ ես իրեն ոչ ուսումնակից և ոչ վաստակակից , այլ սասուցելու , սասուցող , պաշտօն և քաղցր եղած եմ : Ճեմարանութեան և արդարութեան պարտքն այսպէս հասուցանելէն ետեւ , յետոյ ինծի ընելիք անձան և հեշտալի թըշնամանաց և նախատանաց ցանկութեամբ ըմտուունները մարմալելով՝ ապաշնորհութեան սագիւտէ զերծանելու ճարտարմտութեամբ և ընթերցողները կոյր

ու խուլ համարելու երեւոյթով լղկոյ թուրքաժը, և բոլոր ծառայութիւններս, բայցի հայերէն գիրք իրեն փոխ տալէս, ժխտեց ուրացաւ, և «ես քեզմէ դաս առած չեմ» ըսաւ, թէ պէտեւ ես իրեն, Ալանեան իմաստասէր Ստեփան փաշա- յին, Բարունակ պէյին և այլ աշակեր- տակցաց դործնական քերականութիւն դաս տուած, և տասուերկու ամիս շա- րագրութիւն սրբագրած, ոճոյ և հեղի- նակաց ընտրութիւն ուսուցած եմ:

Պ. Իւթիւճեան եղածը չեղած ցուցա- նելու համար՝ դերմարդկային խղճմտու- թեամբ ստեղծեց սյուլներէն դատ, սյուլց հետ երբեմն ունեցած իրքերնիս ալ դեր- մարդկային բանարկութեամբ հրապա- րակ բերաւ խաղախելով և խաթարե- լով, և պարտական լուծութիւն պարտու- թիւն ցուցանելու համար, «ըսածներուս ճշմարտութիւնը ճանչնալով լուեցիր» ը- սաւ:

Ըսածներուն վայրենի ստուծութիւնը կը ճանչնայի, բայց համեստ ընթերցողին յայտնի է, որ գնչուի հողւով, գնչուի ոճով և գնչուի բարբառով տարապարտ բարբանդոյ մը թշնամանքն ընկրկելու համար չէի կրնար խնդիրէն դուրս ան- ձանց անուններն իրեն հետ հրապարակ հանել: Ըսածներուն ստուծութիւնը կը ճանչ- նայի, բայց բարիքը խոստովանելէն ե- տեւ ուրացող ապաշնորհին հետ չէի կրը- նար մարտնչիլ, որ դարձեալ խոստովա- նի, որովհետեւ ըրած բարիքս իրբեւ առ- նելիք չէի պահանջէր, և իր վայրենաց- եալ խղճին անդամ չեմ թողուր որ օր մը զինքը դատաւիտէտ:

Պ. Իւթիւճեան երկու ամիս խնդիրէն դուրս տապառակելէն և վայրվառին թափառելէն ետեւ, Հիւսէյինեան դատին վրայ դրած իս պատասխան մը տուած է՝ իրբեւ անկասկած ըլլալով, որ երկու ամիս առաջ դրածս ընթերցողը մտցած կըլլան: Փոյթ ունեցողները կըրնան այն յօդուածիս հետ Պ. Իւթիւճեանի պա- տասխանը կարգալ և յայտնապէս տես- նալ, որ պարտաւորին ըսածները հոն կանխաւ հերքուած և նշուակեալ են: Պ. Իւթիւճեան եթէ Երուսաղէմի բոլոր վարդապետները չգիտցած բաներուն վկայ բերէ, Հիւսէյինի դատն ազգէն վճռուած է. և մենք թէպէտ այս նիւ- թոյն վրայ այսուհետեւ կամուորաբար խօսիլ չենք կամիր, բայց այժմէն կը ծա- նուցանենք, թէ քանիցս անգամ որ Մա- սիս այսպիսի անօրէնութեանց սատարէ, հաղբը նշուակելու համար պատրաստ կեցած է քանի որ ողջ է

Խ. Պ. ՄԵՍՍԻՍԻԱՆ:

Ուշագրութեան արժանի է՝ Չմիւռնի- սյէն օգոստ. 25 թուով դրուած հետեւ- ւեալ նամակը:

... Խմբագիր
Արշալոյս իր 968 թիւին մէջ «ձախորդ- սյցելութիւն Եդեսեան եպիսկոպոսի Ի Չմիւռնիս» վերնագրով յօդուած մը հը- րատարակել էր, որ բոլոր քաղաքիս ող- ջամիտ հասարակութեան զարմանքը տա- րաւ, և յերաւի քիչ ցաւ չղգաց տեսնե- լով որ իւր 34 տարեկան լրագրի խմբա- գիրը, ինչպէս ինքն ալ նոյն թիւթով կը

պարծէր ու կը պարծիմիշտ իր անդրան- կութեամբը և երկայակեցութեամբը, զառամեր է ալ, և դաժը ու ըսածը չըխտէ. վասն զի այնպիսի խաշոր սուտեր աշխատել է կլեցնելու ընթերցողաց, և մանաւանդ այնպիսի զերութեանց հա- մար որ արեւի նման հոնցն Չմիւռնաց- ւոց քաջածանօթ և իրնց ալ ամենօրեայ խօսակցութեանց նիւթեղած էին:

Արշալոյս կտտէ նախ և առաջ ըսելով թէ սրբազանը նոյն է ալ հասած օրը ընդդէմ պարտաւոր ստեղծող օրինաց իշխանի ճերմակ պո- լոս հարստութիւն և քիչեքաց ըլլալու դիմադրու- սյ- ցելու էր: կը հարցնենք Արշալոյսի թէ, որովհետեւ ինքն ալ մեծաշուք սյցելու- ներէն մին էր, ճիշդ՝ որ դրածին պէս եղած է այս պարագայ, թէ չէ՝ երբ նորին սրբազանութիւնը այն օրը իւր նըն- ջարանի սենեակին մէջ քունէն նոր ար- թընցած երեսը կը սրբուէր, պատրիար- քարանի ետեւէն Մարգարէ սենեակը մըտ- նելով սրբազանին կրտէ, «քանի մը ան- ձինք զձեզ տեսնել կուզեն» (որոնք նըն- ջարանի սենեակին անմիջապէս դրան առ- ջիւ կեցած էին) պատասխանեց թէ «թող քիչ մը սպասեն քանզի զիշերահանդեր- ձով եմ»: Ետեւ զձին իր բաժը անոնց կը հաղորդէ ալ նէ՝ նոքա իսկոյն «իշտա չու- նի» բառը քանի մը անգամ կրկնելով ննջարանին սենեակը կմտնեն: Կտեսնենք Պ. Արշալոյս, թէ այս տեղ ոչ թէ նորին սրբազանութեան ոչ քաղաքավար ընթաց- քը կը նշմարուի այլ ընդհակառակը մե- ծաշուք սյցելուացը. քանզի եթէ մէկը յանկարծ պակելու սենեակը մտնէ, ի հարկէ գոնէ զիշերային, ինչպէս որ կը- սէք, պատաս չարգուտողը պէտքը ըրան ոչ գլուխդ դրուած այլ անկիւն մը կամ սեղանի մը վրայ պիտի գտնէ: Արշալոյս կրտէ թէ Պեր. Եդեսեան եպիսկոպոսն հոնեակ երկուստեալ երկուստեալ իտեանքս հարցանելու, պարտաւոր բանեքս և զնոյն ան- ջնանքէ իրեն որոտած իրարոց փոքրեւ ևայն ևայն, ես առաւել քրքուեց և պարագայ ընտա- րակութեան: Կհարցնենք իրեն թէ ինչ էր սրբազանին իրենց հետ խօսիւ վարուիլը. միթէ իրենց կամքը չկատարելը, իրենց հակասահմանադրական դրութեամբ կամ իրենց կիրքը յարեցնելու գիտաւորու- թեամբ չինել ուղած յանձնաժողովը չի ճանչնել կամ թէ արդար և անաշառ ըլ- լալով իրենց քմաց համեմատ ըսածներ- րուն, այո՛, այո՛ իրաւունք ունիք չըսելը և դրուի չձուլը. ինչու չի յիշեր արդեօք մեր Արշալոյս սրբազանին այն ամէն ան- դամուան խօսքը թէ ես ձեր ամէն բո- ղոքը սիրով կընդունիմ միայն թէ դրով ըլլան և ոչ բանիւ, վասն զի խօսքը օգին մէջ կցնդի: Մեր ձերուկ խմբագիրը կը նախատէ զսրբազանը ըսելով թէ իւրեք ոչ Ամասիս է և ոչ Մարգարէ ալ բազմաթիւեալ և կեանքողական երկն օր. բայց մենք կցա- լինք ըսելու թէ հայկական լրագրի անդ- րանիկը եւրոպական է զգեոտով և դըլ- խարկով միայն՝ և ոչ մտքով. վասն զի Եւրոպայ լոյս, յառաջագիմութիւն, ազա- տութիւն և սահմանադրութիւն կալուայ- ստիկայ ընդհակառակը խուտար, յետա- դիմութիւն, ստրկութիւն կըբարոյէ և սահմանադրութիւնը... կղուէ: Արշա- լոյս կրտէ դարձեալ թէ Քր. Չմիւռնիս

չայն հրամանաւ և սեղոյս Հայոց մեծամասնու- թեամբ նորոգ հասարակաւ ազգայն յանձնաժողովն անորոց շարքին՝ ընկերութեամբ ուրեւ պարտաւոր անջանց և անաջնեքան քիտարաց նոյն օրը կես- րէն առաջ առժամանակեայ տեղապահ երկուստեան քաղքնացին և քաղքութեամբ խօսեցան հետը... Եր հարցնենք իրեն նախ թէ վրեմ. վախ վաշանէ՞քը հաստատուց և ճանչցաւ նորոգ յանձնաժողովը. եթէ կազմել տարը հաս- տատել կհասկնաս, ինչո՞ւ ուրեմն սյցելու եպիսկոպոսին չառաջարկեց կազմուած քօրիսինը ճանչնալ: Եւ միթէ 50-60 հոգիէ բաղկացեալ անձինք անդուոյս Հայոց մե- ծամանութիւնը կամ, ինչպէս որ աւելի վերը գրած է, ինչո՞ւ մեծաշուք մալ կկազմէ արդեօք: Կհարցունենք մեր Պ. Արշալոյ- սի թէ. «քեզ, քու պատրիարքը և ժա- ղովքը չենք ճանչնէր, ելիր հիւանդիդ հետ աղքատանոց գնա»: վերջապէս բա- ւական ժամանակ շատ մը զնորին սրբազ- նութիւնը անպատուելէն վերջը, մինչ- դեռ իր հիւանդն ալ ամենամանր վտան- դի մէջ, առաջնորդարանին սենեակները բալլիքը և առնել հետեւին տանիլը՝ քաղքութեամբ վարուիլ կհամարի միթէ. եթէ քաղքութեամբ վարուիլ այս կեր- ոյիւ կհամարի ինք, կղարմանանք թէ արդեօք ինչ է իր ոչ քաղքութեամբը: Եր հարցնենք դարձեալ իրեն բողոքելով թէ ինչ իրաւամբ 30 հոգիէ բաղկացեալ խա- ժամուծ ամբոխ մը, պատրուակաւ թէ ազգին կողմէն կուգան, պիտի համարձա- կին ազգային պաշտօնատեղին կոխել և պատրիարքական տեղապահ սուրբ Հայրը անկէ վանելու ստիպել. չգիտէին միթէ որ Պեր. Եդեսեան սրբազանը հոն տեղ պատրիարք գնեցիկայցնէր, և թէ պատ- րիարքը օգոստոսիս Մալթանէն կար- գուած է գլուխ և տէր մօտ երեք միլի- ան տաճկաբնակ Հայոց, և ազգային կա- ռուածոց վրայ. ուստի որո՞ւ տունէ դուրս կուղէին հանել նորին սրբազանութիւնը: Մեր Արշալոյսը կյարէ ըսելով. և երբ սրբաները բալլիքին և զնորին գերապարտութեան տեղեյն բալլիքին և զնորին գերապարտութեան տեղեյն և զնորին գերապարտութեան տեղեյն, փնչու ցնջարարն իւր է ի. Պեր. Եդեսեան:

Պ. Արշալոյս, ինչպէս անամօթաբար կը յանդգնին ամենայն բազմաթիւեալ ըսել խոսովարարաց ըրածները ու ըսածները, դու որ իր և երոպական մարդ կարծիս. այս կերպ է արդեօք Եւրոպայի սորվե- ցուցած քաղաքավարութիւնը, և թէ ի- րենց ո՞վ տուած էր զգրութիւն ու իշխա- նութիւն՝ յատուկ Պատրիարքէ և Բ. Գունէ զրկուած տեղապահ առաջնորդի մը պաշտօնը ձեռքէն առնելու փորձ փոր- ձել և իրբեւ հասարակ անպաշտօն եպիս- կոպոս մը դատել. և ինչո՞ւ վերագարձել ինչ. Պեր. Եդեսեան արդար քննիչ մը որ ա- նաշառապէս կուղէ մեր կնճռեալ դործե- րը կարդաղ բել յօդուած և ի սէր Չմիւռ- նիոյ հայ կաղաւթեան:

Մեր Պ. Արշալոյս կրտէ դարձեալ թէ՛ բարեբաղդարձար՝ փայն այս պարագային մեզ իտե- մութեան բանեցնելով ընդդէմանաւ գոյն չի գործեց, ուստի ի գործարէն՝ ազգայն պարտաւորութեանը ե- րկուստեան ու ժամանակ հանցաւ ճարտարաբար վե- րաբարձել յիշեալ եպիսկոպոսին դեմաւեղը մեծ սր- անք: Ետեւ Արշալոյս կկարծէ թէ խոս- վարարները մեծ շնորհք մը ըրեր են նո- րին Սրբազանութեան դեմաւեղը մեծ սրանք:

Քերտուղները, փոխանակ ըսելու առ ահի
և իրենց ապօրինաւորութեան վրայ զըզ-
ջալու : Այս, գովելով կգովենք իրենց
այս մարդասիրութիւնը և կմեղադրենք
Սրբազանը թէ ինչո՞ւ անոնց համամիտ չէ
գտնուելու և իրենց ուղածին պէս չէ ան-
րինելու : Վերջապէս ինչո՞ւ աւելի զգաստ
չէ կեցեր անոնց առջև որպէս զի նոյն
մարդասէր խումբը հաճէր ևս առաւել
մեծ շնորհքներ ընել իրեն :

Արշալոյս կըսէ թէ Երեսեան սրբազան Քր-
ջադէս համոզուեալ և օրինաւոր գործ է զՔերտուղ-
բարոյնը և խոստացեր է քաղաքացիաց իրաւունք
է քործ դնել րաւ : Չարմանայի բան . . . կը
հարցնենք քեզ, Պ. Արշալոյս, թէ քեզ-
մէ ի դատ ո՞վ ունիս որ քեզի պէս զիջա-
նի հրապարակական ճշմարտութիւնը ստեղ-
կարծեմք և ոչ ոք, քանզի ձեր բաժ-
մեծաշուք այցելուներն անգամ ճշմար-
տութիւնը յարգելով կխոստովանին որ Ե-
րեսեանը, ինչպէս ուրիշ այցելուներուն
նոյնպէս իւր ի Զմիւռնիա մտած օրէն
մինչև հիմայ իր քով գացողներուն ըսած
է որ ես պարտաւոր և պատրաստ եմ օ-
րինաւոր բողոք ընել, միայն թէ գրաւոր
ըլլայ . ուրեմն դու Արշալոյս, ինչո՞ւ չի
կարմիրեցար երբ զրպարտեցիր Քրջադէս հա-
մառեցաւ ըսելովդ, ինչո՞ւ չի կարմիրեցար
քանզի ստեղ և զրպարտել քու երկրոր-
դական բնութիւնդ ըլլալը աշխարհածա-
նօթ է : Ահա այս է իզմէն Քրջադէս ազ-
գայն եղեւնեանց ճեշտ նկարագրէր ըսելով կա-
ւարտէ Արշալոյս իր յօդուածը, փոխա-
նակ ըսելու բարբոթին սուտ նկարագիրը .
եղեւնեանց որոց ճեշտ նկարագրէր ըսելով մեր ողոր-
մելին . բայց մենք ընդհակառակը իր ան-
ձին, իր կեղծքին վրայ կցաւարք . այս, կը
ցաւինք որ ի շնորհս իւր ոգեւայտիկը հայ-
թայթեալու ստիպուած է իւր գրելը վար-
ձու տալ մէկ կուսակցութենէ միւս կու-
սակցութեան հանդէս յաջմէ ի ձախ և
ձախմէ յաջ արագաշարժ հայեւոյ ճառա-
գայթի . ասանկ ըլլալուն անխաբ կովկասին
իր բաղամտայ թերթերը և գրեթէ բո-
լոր Հայ ազգութիւնը :

Յ. Գ. — Նամակ գոցելու վրայ էի երբ
Արշալոյսի 969 թիւն ձեռքս անցաւ, որուն
մէջ այնպիսի խոշոր սուտ մը հրատարա-
կել է, որ նամակին մէջ հազիւ ամիս-
փնջ թէ Մեր գեր. պարթեաբական օր-
սրբազանը համոզուեալ կերեւի, թէ անհրաժեշտ հարկ
կայ ճանաչել զՍտեփանոսի ազգայն ընդրեալ էք-
րե ընդրողական ժողով և նորա օրջոյս և է-
ր նախաբանութեամբ յետ զարեւել զճանկեա երեսու-
խանայն ընդրողները ըստ սահմանադրութեան :
Արիկայ բողոքովին սուտ է, այնքան սուտ,
որ ալ չեմ կրնար ուրիշ բան զրուցել,
միայն ընթերցողաց կճգեմ այս մարդուն
համար արուելիք դատաւճիւր :

Արշալոյս՝ որ յաճախ խրատ կուղղէ ու-
րիշ լրագրաց և նոյա ընթացքը կդատա-
վեալ ու կմեղադրէ, շատ աղէկ կընէ,
եթէ նախ ինչքն ուղիղ ու անխտոր ըն-
թանայ, և ապա այլոց խրատ տալու ել-
նէ : Չրէք թէ Զմիւռնիոյ մէջ որչափ ար-
դար զայրոյթ կայ իրեն դէմ՝ ճշմարիտ
եղելութիւնները խեղաթիւրեալ հրատա-
րակելուն, ազգային օրինաց դէմ երես-
լուն, և ազգային իրաւունքն առաջնոր
կոխելուն համար : Ինչ օգուտ ծերութե-
նէ և անդրանկութենէ, երբ խոհեմու-

թիւն՝ արդարաւորութիւն և հեռանե-
սութիւն չկան :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Վերջին փոթորիկն պատճառաւ Սե և
ճերմակ ծովերու վրայ եղած արկածներն
ալ հեղաշեատ կըլին : Կհաւատեն, թէ
Սե ծովու մէջ ստաղձ ու փայտ բեռնա-
ւորեալ 100 էն աւելի ցուկանաւ (չէք-
տիրմէ) խորտակը ու ընկղմը են, և
փոթորիկէն երկու օր յառաջ մայրաքա-
ղաքէս ճամբայելնող Պիղանդիս անուն
ուսանական շոգեւան ինչպօրուի առջև
ցամաքն ինկեր :

— Երկրորդ ատիճանի Միւթէմայիզի
պաշտօնատար անուանեցաւ՝ բարձրապա-
տիւ Մայր թագուհւոյն սեղանաւոր Օն-
նիկ պէյ :

— Ռուսաց կայսրը ի դիմաց օգոստո-
սիա Սուլթանի շնորհաւորելու պաշտօն
ունեցող՝ արտաքին գործոց պաշտօնեայ
Բաշիտ փաշա անցեալ ուրբաթ օրը Օտէ-
սա հասեր է : Գիմուորեր են ուսու պաշ-
տօնատարը, Օսմանեան փոխ-գործակա-
տարն և օսմանեան հպատակը : Նոյն օրը
տեղւոյն քաղաքապետը մեծ խնճոյք մը
տուեր է ի պատիւ Նորին վանմութեան :
Հետեւեալ անուստուն հոն հասնելով
Աղեկասեղը կայսրը, ժամ մ'ետք իւր
ներկայութեանը ընդունել է Բաշիտ
փաշան ու հետը գանուող պաշտօնա-
տարները, և երեկոյն անկից մեկնել է :

Կայսրը բարձրատիճան պատուանշան-
ներ ընծայել է բարձրապատիւ մեծ Ե-
րեսեանց և Ստեփանոսի : Արիկց զատ, Նո-
րին վեհապետութիւնը բարեհաճել է
այլ և այլ ատիճանի պատուանշաններ
տալ Բաշիտ փաշայի հետ գտնուող պաշ-
տօնատարաց և Օտէսայի օսմանեան գոր-
ծակատար Վէհելի Էֆէնտիի :

Կիրակի օր ալ տեղւոյն քաղաքապե-
տութեան կողմանէ փառաւոր կոչուեք
մը արուել է ի պատիւ Բաշիտ փաշայի,
և երեկոյն ճամբայ ելեր է Նորին վե-
մութիւնը մայրաքաղաքս դառնալու հա-
մար :

Այսօր մայրաքաղաքս կապառուի :

— Կըսուի, թէ օսմանեան կառավա-
րութիւնն ալ հետեւելով եւրոպական
տեղութեանց՝ շոգեւան մը պիտի զրկէ
Սպանիոյ ջուրերը ի պաշտպանութիւն օս-
մանեան հպատակաց :

— Խիւլասաթ-իւլ-էֆրեար տաճիկ
լրագիրն դադարեցաւ բարձրագոյն հրա-
մանաւ, առանց սրոյեալ ժամանակի :

— Յոյն կին մը ասկէց երկու տարի ա-
ռաջ ամուսնանալով չափազանց նախան-
ձտ ըլլալուն համար, հաստատութեամբ
որոշել է ամուսնոյն աչքերը փորել, և
մտաբա գործադրելու ելեր է : Ամուս-
նոյն քնացած ատենը, ամէրի մը առեւ-
լով քովը գացեր է, բայց ձեռքերը դո-
ղալուն պատճառաւ չէ կրցեր աչքերը
հանել այլ ոչացը վրայ մեծ վէրք մը բա-
ցել է : Ամուսինը ցաւէն ցատկեր ելեր է,
և կինը ամբիւն նետելով փախեր է, սա-
կայն ամուսնոյն աղաղակէն սպասաւորն
հասնելով՝ ամբիւն գեանէն դտեր, և
կառավարութեան ծանուցանելով՝ ամուս-

ջտպէս բռնուեր բանտարկուեր է ան-
գութ նախանձտան :

— Լուր կայ, թէ Գաղղիոյ հասարա-
կութեան նախագահ Մադ-Մահան մարա-
ջախտն ալ վիէննայի Արուեստահանդէ-
սը տեսնելու պիտի երնէ :

Ծ Ա Ն Ո Ւ Ց Մ Ո Ւ Ն Ք

ՊԱՏՃԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԻՐՔ ՕՍՄԱՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ

Հայերէն պարզ աշխարհաբառ լեզուի
թարգմանուած :
Կը ծախուի դրամաճառաց քով դին
6 զուրուշ :

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈՒՍՈՒԷԻ
Լեարդի, սամոքսի, և աղիքներու ամեն
տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր
է սոյն ղեղահատը, նաև զլայն տկարութեան,
ուժաթափութեան և տխրութեան համար . կը
ընէ և անհետ կընէ ամեն տեսակ անշարժու-
թեանց հետքերը : Սրտի և երկկամանց վրայ
օգտակար ազդեցութիւն մ'ունի . արիւնը մաք-
րելով նոցա խոնգարեալ վիճակը կը կանոնա-
ւորէ, և զրգուելով կենսական գործարանները
կը զօրացնէ : Իւր ղեղական մեծ ազդեցու-
թեամբ սրտախառնութիւն, կուժուութիւն,
մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ
լեցուած կաղեր, դիւի ցաւեր կը վանէ . մար-
սողութիւնը կը շտիւտորի, և մարմինը մաք-
րուելով բոլոր այն ազտեղութիւններէ՝ որ շատ
անգամ զանազան հիւանդութեանց սկզբնա-
պատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական
ղերքը կզգենու :

ONGUENT HOLLOWAY

ՍՊԱՂԱՏՔԻ ՀՈՒՍՈՒԷԻ
Մորթային հիւանդութիւնը և վէրք բուժե-
լու մասին ունեցած պարսամական յատկու-
թեանցը չհատարիր բնաւ ուրիշ ղեղ մը . հին
կամ նոր թունաւոր վէրքեր, սուռքք, քաղց-
կեղ (չլրիփէնչէ), սրունիկ և սահանց վէրքեր
կամ բարբոթին կանչին և կամ կուսանան .
օգտակար է նաև հարբուիսի, հազի, սրտի
բարխաման, մանաւանդ օղացաւ (եէլ) ըսուած
հիւանդութեան : Իւր կազդարիչ և զօրաւոր
ազդեցութեամբ խոյլ (սըրածա) հիւանդու-
թեան սպականիչ զօրութիւնը ինչ տատիճան
որ ըլլայ՝ կը զիմարաւէ :
Այս ղեղերուն գործածութեան եղանակը
նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ
կը գտնուի ամեն ղեղափաճառներու քով :
Աւելի անեղ ուղողը կը հրաւիրուի առ հե-
ղինակն տաքթոր Հայտուէ ի Անտան Սըքսփորտ
փողոց թիւ 333 :

- 1.—Փոռնջը 2ՈՐԵՔԵՏԱՐԹԻ և ՇԱՐԱՐՔ օրերը
կը հրատարակուի :
- 2.—Տարեկան բաժանորդագիրն է միայն չորս
արծաթ մէճիս կանխիկ վճարելի թէ՛ մայրա-
քաղաքիս և իւր արուարձանաց և թէ՛ դաւա-
ռաց համար :
- 3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժա-
նորդ կընդունուի :
- 4.—Տեղական ու դաւառական թղթատա-
րութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :
- 5.—Հատը 40 փարպ է, և կը գտնուի ա-
մեն Հոյ գրավաճառաց խանութները և ձեռք-
ծախողներու քով :
- 6.—Մանուցման տողը 40 փարպ է մէկ
անգամի համար : Աւելի ատան կըլլայ աւելի
անդամներու համար :
- 7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է
գիր ուղղելի սու Տօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան,
Կ. Պոլիս Ալաճա-Համամ Խալիլ խան միջին յարկ
թիւ 49 :

ՏԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԵՐ
Հ. Ս. ԱՂԱՃԱՃԵԱՆ
ՏՊԱՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
Եւստուփեան կաւ Վերեսալի քիւ 12.